Հեղինակներ.
Բեքա Կվաճաձե
Իրակլի Փերաձե

Հեղինակային խումբ.
Գիորգի Ուգուլավա

Մեթոդիստ
Լելա Կակաշվիլի

Պատմություն

11

Մաս II

Աշակերտի գիրք

Երաշխավորվել է Վրաստանի կրթության և գիտության նախարարության կողմից, 2023 թվականին:

 სულაკაურის
გამომცემლობა

Պատմություն 11, մաս II
Աշակերտի գիրք
Հեղինակներ՝ **Գիորգի Ուգուլավա, Բեքա Կվաճաձե, Իրակլի Փերաձե, Լելա Կակաշվիլի**
Խմբագիր՝ **Նինո Գոգոլաձե**
Դիզայներ՝ **Իա Մախաթաձե**
Տեխնիկական դիզայներ՝ **Գիորգի Լոմսաձե**

Առաջին հրատարակություն, **2023**
© Սուլակաուրիի հրատարակչություն, **2023**
Նկարազարդումներ © **Վառլամ Զմուխաձե.** էջ 103
Քարտեզագիր © **Մուրման Մելքաձե**
Բոլոր իրավունքները պաշտպանված են:

ՍՊԸ «Սուլակաուրիի հրատարակչություն»
Հասցեն. Դավիթ Աղմաշենեբելիի 150, 0112
Հեռ.՝ 291 09 54, 291 11 65
Էլ-փոստ՝ info@sulakauri.ge

ISBN 978-9941-37-464-7

History 11 Part 2
Student's Book
© Sulakauri Publishing, 2023
All rights reserved.
Tbilisi, Georgia
www.sulakauri.ge

Բովանդակություն

Թեմա

Միջնադար 6

Նպատակային հասկացություններ

- Ժամանակ
- Տարածություն
- Իշխանություն
- Աղբյուր
- Հասարակություն
- Պատմական իրադարձություն/գործընթաց

ԳԼՈՒԽ 1

Հռոմի գաղափարը միջնադարում և խաչակրաց պատերազմների դարաշրջանը 8

1-2. Ի՞նչ մարտահրավերների բախվեց Բյուզանդական կայսրությունը Մակեդոնական դինաստիայի կառավարումից հետո: 10

3-4. Ինչպե՞ս ձևավորվեց Արևելքում հզոր Թյուրք-սելջուկյան կայսրությունը: 24

5-6. Ինչպե՞ս վերածնվեց Հռոմի գաղափարը Արևմտյան Եվրոպայում Ֆրանկական կայսրության անկումից հետո: 38

7-8. Ինչո՞ւ հակադրվեցին հոգևոր և աշխարհիկ իշխանությունները XI-XII դարերում: 55

9-10. Ինչո՞ւ սկսվեցին խաչակրաց պատերազմները: 70

11-12. Ինչպե՞ս փոխեցին առաջին խաչակրաց արշավանքները Եվրոպան և Արևելքը: 88

13-14. Ի՞նչ կարևոր իրադարձություններով է բնութագրվում խաչակիրների դարաշրջանը: 105

15-16. Ո՞ր գործոններն են նպաստել Եվրոպայում քաղաքների առանձնահատուկ զարգացմանը: 126

Նպատակային հասկացություններ

- Տարածություն
- Հասարակություն
- Ժամանակ
- Իշխանություն
- Հասարակություն
- Պատմական իրադարձություն/գործընթաց

ԳԼՈՒԽ 2

Եվրոպան և Արևելյան աշխարհը XIII-XIV դարերում 152

17-18. Ինչպե՞ս փոխեցին մոնղոլական նվաճումները Արևելյան աշխարհը: 154

19-20. Ինչպե՞ս առաջացավ Օսմանյան պետությունը: 174

21-22. Ինչպե՞ս փոխվեց XIII-XIV դարերի Եվրոպան: 189

23-24. Ինչպե՞ս փորձեց Լենկ Թեմուրը ստեղծել Միասնական Մոնղոլական կայսրություն: 207

Թեմա

Ուշ միջնադար և վաղ նոր ժամանակ 228

Նպատակային հասկացություններ

- Հասարակություն
- Տարածություն
- Պատմական իրադարձություն/գործընթաց
- Հասարակություն
- Աղբյուր
- Ժամանակ

ԳԼՈՒԽ 3

Միջնադարից մինչև Նոր ժամանակ (XV-XVI) 230

25-26. Ինչպե՞ս կործանվեց Բյուզանդական կայսրությունը օսմանյան թուրքերի կողմից: 232

27-28. Ինչպե՞ս հումանիզմի և Վերածննդի դարաշրջանը փոխեցին եվրոպական աշխարհը: 248

29-30-31. Ինչպե՞ս և ինչո՞ւ սկսվեցին Աշխարհագրական մեծ հայտնագործությունները: 265

32-33. Ինչո՞ւ Եվրոպայում սկսվեց բողոքական Ռեֆորմացիան: 291

34-35. Ի՞նչ կարևոր իրադարձություններով էր բնութագրվում XVI դարը Եվրոպայում և Մերձավոր Արևելքում: 310

Նպատակային հասկացություններ

- Իշխանություն
- Հասարակություն
- Տարածություն
- Պատմական իրադարձություն/գործընթաց
- Աղբյուր

ԳԼՈՒԽ 4

Աբսոլյուտիզմի դարաշրջանը Եվրոպայում և Արևելքում 340

36. Ինչպե՞ս ազդեց Հոլանդիայի հեղափոխությունը եվրոպական միապետությունների վրա: 342

37-38. Ինչո՞ւ սկսվեց Երեսնամյա պատերազմը (1618–1648) Եվրոպայում: 351

39. Ինչո՞ւ Անգլիայում թագավորի ու պառլամենտի միջև սկսվեց քաղաքացիական պատերազմ: 370

40. Ինչպե՞ս ձևավորվեց բացարձակ միապետությունը Ֆրանսիայում: 384

41. Ինչպե՞ս հզորացավ Սեֆյանների դինաստիան Իրանում: 403

42. Ինչպե՞ս Պետրոս I-ը վերափոխեց հին Ռուսաստանը եվրոպական պետության: 412

Թեմա

Երկարատև XIX դարը 428

Նպատակային հասկացություններ

- Իշխանություն
- Հասարակություն
- Տարածություն
- Պատմական իրադարձություն/գործընթաց
- Ժամանակ

ԳԼՈՒԽ 5

Աշխարհը հեղափոխությունների և մեծ փոփոխությունների դարաշրջանում 430

43-44. Ինչպե՞ս փոխեցին լուսավորիչները Արևմտյան աշխարհը: 432

45-46. Ինչպե՞ս ստեղծվեց Ամերիկայի Միացյալ Նահանգները: 447

47-48. Ինչպե՞ս հեղափոխությունը փոխեց Ֆրանսիան: 467

49-50-51. Ինչպե՞ս փոխեց Նապոլեոնը Եվրոպայի պատմությունը: 489

Նպատակային հասկացություններ

- Պատմական իրադարձություն/գործընթաց
- Տարածություն
- Հասարակություն

ԳԼՈՒԽ 6

Եվրոպան Վիեննայի կոնգրեսի և բրիտանական խաղաղության ժամանակաշրջանում 526

52-53. Ինչպե՞ս արդյունաբերական հեղափոխությունը փոխեց աշխարհը: 528

54-55. Ինչո՞ւ է XIX դարը համարվում Բրիտանական կայսրության փառքի ժամանակաշրջան: 543

56-57. Ինչպե՞ս Ռուսաստանը դարձավ Արևելքի ամենակարևոր քաղաքական ուժը: 557

58-59. Ինչպե՞ս փոխեցին 1848 թվականը և Ղրիմի պատերազմը եվրոպական իրականությունը: 573

Նպատակային հասկացություններ

- Պատմական իրադարձություն/գործընթաց
- Հասարակություն
- Տարածություն
- Աղբյուր
- Իշխանություն

ԳԼՈՒԽ 7

Գլոբալ փոփոխությունների դարաշրջանը 594

60-61. Ինչո՞ւ ռոմանտիկ ազգայնականությունը հանգեցրեց միասնական Իտալիայի ստեղծման: 596

62-63-64. Ինչո՞ւ սկսվեց քաղաքացիական պատերազմը Ամերիկայում: 610

65-66. Ինչպե՞ս են զարգացել Ճապոնիան և Չինաստանը XIX դարում: 631

67-68. Ինչպե՞ս փոխեց Գերմանիայի միավորումը Եվրոպան: 648

Թեմա I

Ուշ միջնադար և վաղ նոր ժամանակ

ԳԼՈՒԽ 3 Միջնադարից մինչև Նոր ժամանակ (XV-XVI) 230

ԳԼՈՒԽ 4 Աբսոլյուտիզմի դարաշրջանը Եվրոպայում և Արևելքում 340

Մարտին Լյութերը Վիտենբերգի եկեղեցու դռան վրա փակցնում է 95 թեզիսները:

ԳԼՈՒԽ

3

Միջնադարից մինչև Նոր ժամանակ (XV-XVI)

Մո՛ւտք գործիր պատմություն. իմացի՛ր, թե Հռոմի պապն ինչպես բաժանեց աշխարհը Իսպանիայի և Պորտուգալիայի միջև:

XV–XVI դարերը Եվրոպայում և Արևելքում առանձնանում են համաշխարհային նշանակության պատմական իրադարձություններով: Այս դարերը դարաշրջանի սահմանագիծ են:

XV դարի միջին շրջանում օսմանցի թուրքերը գրավեցին Կոստանդնուպոլիսը և ոչնչացրին Բյուզանդական կայսրությունը, որից հետո Մերձավոր Արևելքում փոխվեց քաղաքական և մշակութային իրականությունը: XV դարի երկրորդ կեսը Եվրոպայում հումանիզմի և Վերածնունդի դարաշրջանն է՝ Վերածնունդի դարաշրջանում վերափոխվեց եվրոպական հասարակության մտածելակերպը և մշակույթի շատ ոլորտներ նոր բարձունքների հասան: Շուտով սկսվեց Աշխարհագրական մեծ հայտնագործությունների դարաշրջանը, երբ եվրոպական պետությունները սկսեցին հեռավոր ծովային արշավախմբերը: Աշխարհագրական մեծ հայտնագործությունները հիմնովին փոխեցին մինչ այդ գոյություն ունեցած աշխարհագրական տարածության ընկալումն ու պատկերացումները, մեծագույն ազդեցություն ունեցան հասարակության կյանքի բոլոր ոլորտների վրա: Միևնույն դարաշրջանում իրականացվել է բողոքական Ռեֆորմացիա անունով հայտնի կրոնական բարեփոխումը, որը տարածվել է եվրոպական աշխարհի զգալի մասի վրա:

Այս գլխում կիմանաս, թե օսմանցիներն ինչպես կործանեցին Բյուզանդական կայսրությունը, ինչպես փոխեցին եվրոպական հասարակության մտածողությունը և մշակույթը հումանիզմն ու Վերածնունդը, ինչպե՞ս սկսվեցին աշխարհագրական հայտնագործությունները, ի՞նչ էր բողոքական Ռեֆորմացիան և ինչպես արտացոլվեց այս ամենը եվրոպական աշխարհի վրա, ինչպես նաև՝ ինչ կարևոր իրադարձություններով էր բնութագրվում XVI դարը Եվրոպայում և Մերձավոր Արևելքում:

Քրիստափոր Կոլումբոսի արշավախումբը



Հանգուցային իրադարձություններ

ՀԱՄԱԼԻՐ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3

Ժամանակային գիծ. Վերափոխումների դարաշրջան

Ուշադիր կարդա՛ դասագրքում ներկայացված պարագրաֆները, որոնցում նկարագրված են XV-XVI դարերի կարևոր իրադարձություններ և գործընթացներ: Ստեղծի՛ր ժամանակային գիծ, որում ժամանակագրական հաջորդականությամբ կներկայացնես յուրաքանչյուր պարագրաֆից, ըստ քեզ, ամենակարևոր պատմական իրադարձությունը՝ դրա մասին բերված աղբյուրի մատնանշմամբ:

Ներկայացնելու ժամանակ աշխատության մեջ հստակ ցո՛ւյց տուր.

- Համաշխարհային նշանակության պատմական իրադարձություններ յուրաքանչյուր պարագրաֆից և հիմնավորում, թե ինչպիսին էր դրանց նշանակությունը: *(Պատմական իրադարձություն Ուս.գ. 1, 3, ժամանակ Ուս.գ. 1, 2)*
- Յուրաքանչյուր պարագրաֆից ներկայացրո՛ւ այն աղբյուրները, որոնք, ըստ քեզ, ամենից լավ պատկերացում ստեղծեցին այն պարագրաֆում նկարագրված իրադարձության, դարաշրջանի և տարածության մասին: *(Աղբյուր Ուս.գ. 1,2,3)*
- Հիմնավորի՛ր, թե ինչ կարևորություն ունեին այս իրադարձությունները, և ինչպես են դրանք փոխել աշխարհագրական տարածությունն ու գաղափարներն այդ դարաշրջանում: *(Տարածություն Ուս.գ. 1,3, պատմական իրադարձություն 1,2)*
- Հիմնավորի՛ր, թե ինչպիսի աղբյուրներ ես ընտրել, և ինչպես պետք է որոշել դրանց մեկնաբանության և հուսալիության աստիճանը: *(Աղբյուր Ուս.գ.1,2,3)*

Կողմնացույց – ճանապարհորդների անբաժանելի ատրիբուտ

Հասկացություն

- Պատմական իրադարձություն
- Ժամանակ
- Աղբյուր
- Տարածություն

Մշակվում է Աշակերտի տետրում

25-26. Ինչպե՞ս կործանվեց Բյուզանդական կայսրությունը օսմանյան թուրքերի կողմից:

► **Հասկացություն.**
պատմական իրադարձություն, աղբյուր

► **Հանգուցային հարց.**
Ինչպե՞ս օսմանցիներին հաջողվեց գրավել Կոստանդնուպոլիսը և պահպանել բյուզանդական տարածքը:

► **Ծանոթագրություն.**
XI դարի երկրորդ կեսից ի վեր թուրքերը հիմնավոր ամրապնդվեցին Փոքր Ասիա թերակղզու մեծ մասում: Փոքր Ասիայի կորուստը մեծապես թուլացրեց Բյուզանդական կայսրությունը: XIII-XIV դարերում Բյուզանդական կայսրության գլուխ կանգնած Պալեոլոգոսների դինաստիային չհաջողվեց վերականգնվել ու հաղթահարել ճգնաժամը: XIII դարի վերջին Բյուզանդական կայսրության հարևանությամբ Փոքր Ասիա թերակղզում կազմավորվել է Օսմանյան սուլթանությունը, որն առանձնանում էր ագրեսիվ նվաճողական քաղաքականությամբ: Այն աստիճանաբար ընդլայնվեց բյուզանդական տարածքների հաշվին: Օսմանցիների հիմնական նպատակը Կոստանդնուպոլսի գրավումն էր: XV դարում Օսմանյան սուլթանությունը ձևավորվեց որպես հզոր ռազմական տերություն, և Բյուզանդական կայսրությունը չկարողացավ դիմակայել նրա ռազմական ագրեսիային: Բյուզանդիան պետք է փրկիչ որոներ Եվրոպայում, բայց քրիստոնեական աշխարհին, չնայած ակնհայտ վտանգին, չհաջողվեց միավորվել: 1451 թվականին օսմանյան սուլթան դարձավ Մեհմեդ II-ը: Նա իր գլխավոր խնդիրը դարձրեց Կոստանդնուպոլսի գրավումը և երկար նախապատրաստական աշխատանքից հետո, 1453 թվականի գարնանը սկսեց Կոստանդնուպոլսի պաշարումը, որն ավարտվեց կայսերական քաղաքի անկմամբ, և սկսվեց պատմության մի նոր փուլ:

«Օսմանյան թուրքերը գրավեցին երբեմնի հզոր կայսրության փոքր մնացորդը, որը սահմանափակված էր մեկ քաղաքի պարիսպներով»:

Էդվարդ Գիբոն, XVIII դարի բրիտանացի պատմաբան

Ինչպիսի՞ իրավիճակ էր Բյուզանդական կայսրության շուրջ XV դարի I կեսին:

Արևելյան Հռոմեական կայսրությունը, որը հայտնի էր Բյուզանդիա անվանումով, ուշ միջնադարում հաշվում էր իր գոյության վերջին տարիները: Միջին դարերի վաղ շրջանում Բյուզանդական կայսրությունը քրիստոնեական աշխարհի քաղաքական, մշակութային և տնտեսական կենտրոն դառնալու հավակնություն ուներ: Սակայն XI դարից ի վեր սկսվել է երկարատև անկման ժամանակաշրջանը, որը պայմանավորված էր բազմաթիվ պատճառներով: Ինչպես արդեն գիտես, Բյուզանդիային հասցված ամենամեծ հարվածը եղել է 1071 թվականին՝ Մանազկերտի ճակատամարտից հետո Փոքր Ասիա թերակղզու մի մեծ մասի կորուստը: Գյուղատնտեսությամբ զարգացած, պաշարներով և բնակչությամբ հարուստ Անատոլիան անցավ թուրքերի ձեռքը, իսկ Բյուզանդիային մնաց համեմատաբար աղքատ Բալկանյան մասը: Բյուզանդիայի համար կործանարար էր նաև 1204 թվականին Կոստանդնուպոլսի գրավումը վենետիկցիների և ֆրանսիացիների կողմից: Կայսրությունը հաջողվեց վերականգնել, բայց տնտեսական տեսակետից Բյուզանդիան կրկին մնում էր իտալական քաղաք-պետություններից կախվածության մեջ:

Աղբյուր 1

Դեյվիդ Յակոբ, ժամանակակից հրեա պատմաբան

«...XIV դարում վենետիկցիների և ջենովացիների տնտեսական ազդեցությունը Էգեյան, Բոսֆորի և Սև ծովերի տարածաշրջանում էլ ավելի ամրապնդվեց: Իտալական ռազմածովային հսկաների համար Կոստանդնուպոլիսը որոշակի առևտրային կենտրոն էր հանդայովսանոայով, Բացի տնտեսականից, անընդհատ աճում էր նաև Վենետիկի քաղաքական ազդեցությունը Էգեյան ծովի ավազանի և Բյուզանդական կայսրության կողմից վերահսկվող տարածքների նկատմամբ»:

Բյուզանդական կայսրության մնացած մասը, մշակութային առումով, չէր զիջում իր դիրքերը, թեև տնտեսապես և քաղաքականապես թուլացել էր: Ելնելով աշխարհագրական դիրքից՝ Բյուզանդիան ուղղակիորեն սահմանակից էր մշակութային, կրոնական և սոցիալական առումով տարբեր ժողովուրդների հետ: Արևմտյան Եվրոպան և արևելքից թուրքական աշխարհը այս կամ այն չափով թշնամաբար էին տրամադրված բյուզանդական տարածության նկատմամբ: Բյուզանդական աշխարհում նույնիսկ XV դարում պահպանված էր «մենք և բարբարոսները» տրամադրվածությունը, այնտեղի քաղաքական և մշակութային շրջանակներում դեռ շատերը համարում էին, որ իրենց շուրջը գտնվող ժողովուրդներն իրենց հավասարը չեն: Իրականությունը բոլորովին այլ էր:

Էգեյան ծովի ավազանը 1410 թվականի դրությամբ

1

Արևմտյան Եվրոպան XI-XIII դարերում սկսեց արագ զարգանալ, հաջողությամբ Փոքր Ասիայում զարգանում էր նաև Օսմանյան սուլթանությունը: Բյուզանդական կայսրությունը հայտնվել էր երկու արագ զարգացող աշխարհների մեջտեղում, իսկ ինքը շարունակում էր իր տնտեսական ու քաղաքական անկումը:

Աղբյուր 2

Դոնալդ Նիկոլ, XX դարի բրիտանացի պատմաբան

«...X-XII դարերում արևմտյան և արևելյան հարևանների նման Բյուզանդական տարածությունը նույնպես ժողովրդագրական առաջընթաց ապրեց: Սակայն, ի տարբերություն եվրոպացիների կամ թուրքերի, նա չի կարողացել վերակազմակերպել ռազմական և տնտեսական ինստիտուտները: Հետագայում երկու ուժերն էլ օգտվել են Բյուզանդական կայսրության այս թույլ կողմերից»:

XIV դարի ընթացքում Օսմանյան սուլթանությունն աստիճանաբար հզորանում էր: Բյուզանդական կայսրությունը մինչ այդ նույնպես հարաբերություններ ունեցել է թյուրքերի հետ, սակայն, օսմանցիների գործողությունները պարզ են դարձրել, որ իրենք մսացած բոլոր թյուրքական պետություններից տարբեր նպատակներ ունեին: 1362 թվականին օսմանցիները գրավել են Բալկանների ամենակարևոր քաղաքը՝ Ադրիանապոլիսը, և վերջապես հաստատվել կայսրության Բալկանյան հատվածում ևս: XIV դարի 60-ական թվականներից ի վեր օսմանցիների ագրեսիայից պաշտպանությունը դարձել է Բյուզանդական կայսրության կարևորագույն խնդիրը:

Առաջադրանք

1 Հիշի՛ր

Ինչո՞վ էին տարբերվում օսմանցի թուրքերը մյուս թյուրքական պետություններից, և ինչո՞ւ էր նրանց համար կարևոր Բյուզանդական կայսրության դեմ պայքարը:

2 Դատողությո՛ւն արա

Ինչո՞ւ չկարողացավ Բյուզանդական կայսրությունը զարգանալ եվրոպական աշխարհի նման: Ի՞նչ գործոններ էին խոչընդոտում:

Ինչպես արդեն գիտես, XIV դարի վերջին շրջանը ծայր աստիճան ծանր էր, երբ օսմանցիների հզոր սուլթան Բայազիդ I Յըլդըրըմը («կայծակնային») Կոսովոյի (1389) և Նիկոպոլիսի (1396) ճակատամարտերում տարած հաղթանակներից հետո Բալկաններում ամրապնդել էր իր դիրքերը՝ թե՛ դիվանագիտական, թե՛ ռազմական ռեսուրսն ուղղել Կոստանդնուպոլսի գրավմանը: Այս ժամանակ քաղաք Կոստանդնուպոլիսը հիշեցնում էր յուրօրինակ կղզի, որը բոլոր կողմերից շրջապատված էր Օսմանյան սուլթանության տարածքներով: Կոստանդնուպոլսի ցամաքային շրջափակումը սկսվել է 1394 թվականին, իսկ երկու տարի անց նրան օգնության եկած եվրոպացի խաչակիրների Նիկոպոլիսի մոտ կրած պարտությունից հետո Բյուզանդիայի վիճակը դարձել է անհուսալի:

Աղբյուր 3

Հալիլ Ինալչըք, XX դարի թուրք պատմաբան

«...Կոստանդնուպոլիսը գտնվում էր մեր տարածքի մեջտեղում՝ պաշտպանում և հովանավորում էր մեր թշնամիներին և դրդում նրանց մեր դեմ, այդ իսկ պատճառով քաղաքի նվաճումը կապահովեր մեր երկրի ու ժողովրդի անվտանգ ապագան»:

Անելանելի վիճակում գտնվող Բյուզանդիայի կայսր Մանուել II Պալեոլոգոսը (1391-1425) գնացել է Եվրոպա՝ ռազմական և քաղաքական օգնություն խնդրելու: 1400 թվականի մայիսին նա գտնվում էր Վենետիկում, հունիսի 3-ին ժամանել է Փարիզ, աշնանը նրա դեսպաններին ընդունել են Իսպանիայի թագավորական արքունիքում, իսկ 1401 թվականի փետրվարին նա այցելել է Լոնդոնի պառլամենտ:

Նշված դարաշրջանում եվրոպական պետությունները Օսմանյան սուլթանության դեմ երկար ու հեռավոր ռազմական արշավներ վարելու համար չունեին անհրաժեշտ ռազմական ռեսուրս: Համապատասխանաբար, Եվրոպայում Բյուզանդիայի կայսերը ջերմորեն են ընդունել, սակայն, բոլոր արևմտյան տերությունների միապետները կամ կառավարող շրջանակները սահմանափակվում էին ֆինանսական աջակցությամբ:



Մանուել II Պալեոլոգոսը Լոնդոնում հանդիպում է Անգլիայի թագավոր Հենրի IV-ի հետ

1